



Օ Ր Ա Պ Ի Ր

Ք Ա Պ Ա Ր Ա Ն Ա Ն Ք Ա Ն Ա Ս Ր Ք Ա Ն Ա Ն Ե Ւ Ա Ռ Ե Ւ Տ Ր Ա Ն Ա Ն

ԱՌՔՐԱ ԽՈՒՐԻՔ

Կոստանդնուպոլիս, 12-16 Մարտ:

Թեև մօտ օրերս Վերալեյլահի մեջ եղած զիս-
 ւածները այնքան երեւելի բան մը չեն, ինչպէս որ
 թշնամիները չարակամութեամբ մեծցուցեր են, սա-
 կայն Վ. Գուռը ուզելով ստոյգ իմանալ աս գործ-
 քը, որ անոր համեմատ որոշմանը մը ընէ, Վ.
 Վսեմութիւն Վամիք փաշան Գրիբալայի հին կա-
 ռավարիչը պիտի խրկէ հոն որ անաշու քննութիւն
 մը ընելով աս գործքերուն ինչպէս ըլլալը հասկը-
 նայ: Վ. պաշտօնատարին ընտրութիւնը, որ մեծ
 յարգ մը ունի իր խոհմի բնութեանը արժանաւոր,
 նոր նշան մըն է որ Վորին Վեհափառութիւնը կը
 ցանկայ ճշմարտութիւնը գիտնալ, որն որ անհար է
 որոշել այնքան անհիմն ծաղրական պատմութիւննե-
 րու մէջէն, մանաւանդ թէ բնաւ տեղեկութիւն մը
 դեռ առած չէ, Վ. Վսեմ. Վեհափաշ փաշայէն
 Պապոտառ:

Վ. Վսեմութիւն Վամիք փաշան որ պիտի մեկնի
 վաղը կառավարութեան մէկ շրջանաւորը, որ իրեն
 համար պատրաստուած է, ջանք ընելու է խաղաղու-
 թիւնը հաստատելու. ու անշուշտ կը յուսանք որ այս
 զիպաւածը ամենեւին արդիւր մը չըլլար, ու քիչ ա-
 տենի մէջ Պարսից ու Սոմանեան տէրութեան վեճը
 հաճելի կերպով մը բոլորովին կը վերջանայ:

Հինգշաբթի մեծամեծ պաշտօնատարները ժողով
 մը ըրին Վ. Գուռը, ու կըսէ թէ Պարսկաստանի
 գործքին համար էր: Երբ ժողովը լրմնա-
 լէն ետքը ուրիշ ժողով մըն ալ ըրին պաշտօնատար-
 ները Վ. Բարձրութիւն մեծ Վեղերին բնակա-
 րանը:

ՔԱՆԱՍՐՔԱՆԱՐ

Դիտողութիւնը հայոց լեզուն վայ:

Հատ հաւանական է ըսել, թէ Մատուած մարդուս
 խօսելու կարողութիւնը շնորհելով անոր գործածութիւնը
 իր ապրտ կամքին կամ ընտրողութեանը յանձնէր է, որ
 ինչ կերպ արտաբերութեամբ ինչ բան նշանակելը ինքը
 որոշէ կարգի դնէ. ասանկով՝ մարդս իր առաջին անմե-
 ղութեան վիճակին մէջ որ տակաւին միտքը իմացական
 ու արհեստաւոր գիտութիւններով չի բնաւարած, մի-
 նակ տեսածը, ըսածը, հոտոտածը ու շօշափածը կընար
 զգալ, ու անով քիչ մըն ալ իմացականութեամբ վերաբե-
 ռել մէկ անձանթ տեղի մը մէջ աչքը կըբանայ իր հո-
 ղիցները կընայի, երբեմն կըզարմանայ, երբեմն կըզար-
 հուրի. իր ընկերին երեսը շառաղներով կընայի. գէպի
 վեր երկնքը կըզիտէ, գէպի վար երկիրը կընաւարհե-
 ցընէ աչքը. կափշի կըհիւսնայ, կուզէ իր ընկերին հետ
 անոնց վրայ խօսիլ ու իր կարծիքը հասկըցունել մէ-
 լէկ անուն դնելով անոնց: Ինչպէս միտքը աստուածա-

— Ինչպէրի էֆէնտին, որ ատեն մը Գամասկոսի
 տէֆէրտարն էր ու քանի մը ժամանակէ 'ի վեր
 գործքի մէջ չէր, ամսուս 4 ին թաղաւորական հը-
 րամանով որոշուեցաւ որ Վուրի էֆէնտին տեղը՝
 իբրեւ անգամ բարձրագոյն խորհրդարանին, ու ար-
 տաբոյ կարգի գործակալն պաշտօնով Վ. Գրան
 կողմէն լըզըրում երթայ, պարսից հետ եղած վեճը
 կարգի դնելու համար:

Ինչպէրի էֆէնտին որ աս պաշտօնը արժանապէս
 կատարելու համար հարկաւոր եղած ձիրքերը ունի.
 հրաման ընկալաւ որ պատրաստ ըլլայ շուտով մեկ
 ներու:

Վ. Վսեմութիւն Վարիմ էֆէնտին արտաքին
 գործոց պաշտօնատարը թիթեկ հիւանդութեան մը
 պատճառով, չի կրցաւ երեկ Վ. Գուռը երթալու:

— Պրոֆ. Գ. Գ. անգղիացոյ պատերազմական շրջե-
 նաւը, կիրակի իրիկուն մեկնեցաւ: Կըսէ թէ ուզ-
 զակի Մորիստան պիտի երթայ, որպէս զի ճամբան
 գաղղիացոյ շրջանաւին հանդիպելով, անոր յանձնէ
 սըր Վրէդֆորդ Վեհնիկի նամակները:

— Ինչպէս հինգշաբթի ամսուս 4 ին ժողով մը
 ըլլալով Մատուած փաշայի նախագահութեամբ
 խօսակցութիւն եղաւ երկրագործութեան վրայ: Վու-
 լըր անդամները ներկայ էին աս ժողովին, որ վեր-
 ջապէս որոշեց հարկաւոր եղած միջոցները քննել
 ու երկրագործութիւնը ծաղկեցընելու համար 'ի
 գործ դնել զանոնք:

Թուսաց կառավարութեան Լեզգիայի մէջ շե-
 նել տրուած շրջանաւորուն երկուքը (տէսա ու Վը-
 րիմէ կոչուած հասան հոս, առաջինը 6 ին իրիկան
 գէմ, երկրորդը 7 ին առուընդ կանուխ: Լըկուք.
 նին մէկէն երեկ (տէսա գային: Վս երկու հոյա-

կապ շրջանաւորը, որոնք 250 ու 260 ձիու զօրու-
 թիւն ունին, կըսէ թէ կանոնաւոր երթեկեկութիւն
 պիտի ընեն (տէսայի ու Կոստանդնուպոլսոյ մէջ:
 Ետեղ մէկուն մէջ երկաթի շրջանաւ մը կայ, քակ-
 ւած, որ տեղը հասնելուն յարգարելու են (գուրմաք),
 ասիկա գետերու մէջ պիտի բանի:

Բարձրագոյն Գուռը՝ ժանտախտէ զգուշանալու
 համար հատուած արգելանոցներուն (քարանդի-
 նա) քսիկարդութիւնը տեսնելով, արժան համարե-
 ցաւ որ աս կարեւոր գործոյն ընդհանուր վերակացու-
 թեան պաշտօնը խափանէ: Ինչպէս հիմայ Վ. Վ.
 Ոպերդին յանձնըւած էր աս պաշտօնը, որ յիշաւի
 շատ կերպ հարկաւոր բարեկարգութիւններով կա-
 ռավարից: ասկէց ետեւ, առողջութեան ատենին
 նախագահ Պաքի էֆէնտին պիտի վարէ նաեւ անոր
 պաշտօնը: Կըյուսանք որ Պաքի էֆէնտին իր խո-
 հեմութեամբ հոգ կըտանի Վ. Ոպերդին ըրած
 բարեկարգութիւնները ալ ելելի ծաղկեցընելու:

Լըքունի վաւոյրապետ մեծապատիւ Տատեան
 Պօղոս աղան տասնհինգ օրէ 'ի վեր հիւանդ ըլլա-
 լով բաւական նեղութիւն կրեց. բայց գոհութիւն
 լստուծոյ հիմակ աղէկ է ու օր է օր առողջութիւն
 կըստանայ. այսու ամենայնիւ տակաւին տունէն
 դուրս ելլալու կարողութիւն չունի:

Երկու օրէ 'ի վեր գէշ եղանակ ու ցուրտ կընէ,
 արեւ ելեան քամին սաստիկ զօրութեամբ կըփչէ. ե-
 րեկ նաւակ մը որուն մէջը չորս հոգի կար, թօփ-
 խանէին առջեւ տեղիւրիւ ըլլալով, մէջը եղողները
 ամենն ալ խղբովէր են մէկ հոգիէն 'ի զատ, որ լո-
 զալով աղատեի է:

տուր. շնորհքով կըզօրէ, բայց մէկ կողմէն գործարանը
 անընտել, ու միւս կողմէն ալ տեսարանը նոր, դժուա-
 րութիւն կըկրէ, սիրաւ կընկալանայ կըկրակոտի, ու կը-
 սկըսի այն տեսնուածներէն իրեն ազդուած զգայութեան-
 ցը յարմար կիրքերով հառաչել, բերնէն քիթէն շատ
 միջարկութիւններ դուրս ցածկեցընել, ու անոնց վրայ իր
 գիտաւորութիւնը ուղղելով ընկերին իմացունել: Ին-
 կերն ալ անոր նայուածքէն շարժմանքէն, նոր խօսելու
 սկըսող երախտներուն պէս, միտքը կըհասկընայ, այն
 միջարկութիւնները անոնց անունը սկսելով՝ հոն սկիզբ
 մը կըլլայ մարդկային լեզուին, անկէց ետքը կըսկըսին
 երկու ընկեր մէկմէկու մտքերնին իմացունել և իմանալ:
 Լ. յն դրանչելի տեսարանին քիչ մը ժամանակ ընտանե-
 նալով՝ կիրքերնին կըզագարի ու իրենց հանգարտու-
 թեամբը դիւրին կերպ մը կըբանեցընեն իրենց զգայու-
 թեանը տակ ինկած բաներուն երևութիւն, ձայնին, հո-
 տին կակղութեան և պնդութեան, ցրտութեան և ջեր-
 մութեան յարմար մէյմէկ հնչում՝ այսինքն վանկ, կար-
 տաբերն: Լ. հա առաջին խօսակցութիւն, ըստ որում այն
 ժամանակը խօսելու առարկայ քիչ կար, այն սակաւիկ

խօսակցութեամբը մեկմէկու հետ՝ երեւոյթը, այսինքն
 երեցած աշխարհքը կըտրամաբանեն, ու հետզհետէ խօ-
 սակցութիւնը ելնընելով երկու կամ երեք վանկերով,
 երեցածներէն աներեւոյթ կըմակարերեն:

Վիշարկութիւնը բնական լեզու ըլլալով՝ ոչ երբեք
 մարդուս կանոնին տակը մտած է, և ոչ ալ մոնալու է
 (վասն զի յառաջ է բնութիւն քան զարհեստ), բայց ե-
 թէ միջ ըկու թենէ անունի դառնալով. ինչպէս որ միջար-
 կութիւնները հետզհետէ բառ եղեր, ու բառէն բառ բառ
 այսինքն խօսք խօսք եղած են: Լ. մենուն յայտնի է որ
 հայոց ազգի լեզուն մէջ շատ միջարկութիւններ անուն
 եղած են. զոր օրինակ. ա՛հ, վի՛հ, ո՛հ, ա՛հ, վա՛յ, վի՛շ,
 հի՛, ասոնք ժամանակէ մը ետեւ անունի փոխելով կա-
 նոն ընդունել են, ու անատենը միջարկութիւն չեն ա-
 նուն են: Կան նաեւ շատ անուններ ալ ձայնէն առնը-
 ւած. ինչպէս հուր, ջուր, հով, ոտք, ձեռք, ումպ, հեծ,
 սուր, հազ, թուք, ունչ, քար և այլն, որ առաջին անգամ մի-
 ջարկութիւն եղած կըսեպին. ըստ որում մարդս՝ հօրին
 ջուրին հովին և այլոց ձայները լսելով, կիրքը կըշարժի
 կամ զարմացական կամ երկեղական և կամ վշտակա-

—Անցած շաբաթ ցորեկը Մանավուտ գետը հրկի զուծիւն մը պատահեցաւ Ս՝ըրըրը Էանթին ամա-
րանոցը . Թէպէտեւ հարկաւոր եղած օգնութիւնը
ժամանակին հասցուցին , այսու ամիսային յիշեալ
պալատը բոլորովին երեցաւ . բայց մերձակայ
տուններուն վնաս մը չեղաւ : Այն գիշերը նաեւ խուս
խափու Մատուածամայր եկեղեցիին մօտ խաղանքի
թաղ ըսեալ տեղը , այլազգի տուն մը բռնկելով
երեցաւ , բայց բարեբաղդաբար խնայն օգնութիւն
հասնելով մարեր են :

Ն . Ստեփաննիս Կամիք փաշան երեքշաբթի
օրը Փէյթի Է Էֆէթ շոգենաւով մեկնեցաւ ասկէ
Սամսուն երթալու , ուսկէց Պաղտատ պիտի երթայ :

Երբոր մի նամակները փետրվար 25 ին գրված ,
կրճանուցանեն որ նոյն ամսու 10 ին՝ զեռ ծանր հի-
ւանդ է եղեր Ս՝իբրա Դաֆէր , Կամիք քաղաքը .
ու պարսից Է Էֆէթ ալ արդէն անոր պաշտօնը Սիբ-
րա Կաթի խանին յանձնէր է , որ մօտեցաւ Երբոր
պիտի գայ կրտսեր :

ԱՍՈՐԵՍՏԱՆ

Պէրուծ , 22 փետրվար :

Սարմիններուն տիւրքներէն խնդրած վնասնե-
րուն փոխարէնը կարգի դնելու համար հաստատուած
ժողովը , կըշարունակէ միշտ որ աս գործքը վեր-
ջացնեն . բայց դեռ որոշմունք եղած չէ : Կըհաս-
տատեն Թէ 40 միլիոն դահեկանի կըհասնի քրիստո-
նեաներէն գողցուած բաները , Թէ ստակ և Թէ ան-
դամանդ , արծաթեղէն , եկեղեցական անօթներ
զարդեր , մետաքս , կարասիք , ևն : Հիշաւի տիւր-
քները աս օրւան օրս շատ հարստացած են , վասն
զի ուրիշին ինչքը Թալլելով այնքան ստացուածքի
տէր եղան : Հասարակօրէն կըկարծուի Թէ շատ
դժուար պիտի ըլլայ քաջած վնասներուն փոխարէնը
ընդունել :

Տիւրքի հին շէյխերը , որ քանի մը ամիս է աս
աւարառութեանը (եաղմայ) համար բանտը դրուե-
ցան , միշտ հին կըկենան , ու ամենեւին իրենց հա-
մար խօսք մը չըլլար :

Կան միջարկութեամբ անոր ձայնը իր բերնովը հնչելով ,
և աչքը անոր տնկելով՝ ընկերին կիմացնէ :

Ս կերպ բառեր հայու լեզուին մէջ պիտի շատ գրտ-
նընելով , մեծ իրաւունք ունի ազգը պնդելու Թէ առաջին
ու աստուածային առանձնաշնորհութիւն է իր լեզուն :

Կախիկին աստուածաշէն մարդը՝ բնական շնորհքով ,
կանոնաւոր թուով ու բանաստեղծական համեմատու-
թեամբ շատ անուններ օտեղծեր է , ոմանց ձայնէն ոմանց
թիւէն , ոմանց այլ և այլ իրեն վերաբերեալ զգայութե-
նէն . խիստ երեցածին դառնաձայն , քաղցր երեցածին
գեղեցկաձայն անուն գնելով , ինչպէս հոգն ալ չորս տա-
րեքին մէկը ըլլալով՝ բանաստեղծօրէն անոնց նմանա-
կից անունով շիներ է . հուր , ջուր , հող , հող , նոյնպէս
եղանակները՝ ամառն , ձմեռն , աշուն , գարուն :

Երբոր շինած անուններուն մէջէն հրաշայի է երկնք
բառը , այսինքն երկու ինք (իբր օնլար) կամ երկուք (իբր-
էր) , որ կընշանակէ արև և լուսին , կամ լոյս և մութ : Եր-
կեր երկու իր , այսինքն հող և ջուր կամ քար և հող , կամ
ցամաք և ծով :

Երբոր Թէն եղած անուններ , պաշտու , լոյս , մութ ,

Անցած ամսու 12 ին Պէթ Մէրի գետը , Պէթգե-
նի երկիրը , քիչ մը խռովութիւն եղաւ , ու շատ
պիտի հվեղար ու սաստկանար Թէ որ բարձրա-
գոյն կառավարութիւնը շուտով մէջ չի մտնար չի
խաղաղէր նէ : Վրիստոնեայ Էմիրը որ հրաման ը-
րէր էր գնտակ չի դնելու իրենց հրացանին մէջ ,
տիւրքները ընդհակառակը կըպնդէին Թէ մունե-
տիկները (Թէլալ) քրիստոնէական կերպ մը բանե-
ցնելով կանչեցին և ոչ տաճկի սովորութեամբ , ու
աս պատճառով քրիստոնէաներուն վրայ արձըկե-
ցան , որոնք Թէպէտ գերեք պաշտպանեցին այլ
մէջերին քանի մը հոգի մեռնող եղաւ : Բարե-
բաղդութեամբ կառավարէ Սաստ փաշան , իմա-
նալով աս զիպաւոր , անմիջապէս զօրաւոր միջոց-
ներով զազրեցուց ծեծը , ու երկու կողմէն ալ եր-
սունի ջափ մարդիկ բանտը դրաւ , որոնք խիստ է-
վելի խռովութիւն հանդիսներն էին : Մտնք դեռ
բանտին մէջն են ու քիչ մը ժամանակէն ետքը դա-
տաստանին պիտի տեսնուի :

Ն . Ստեփաննիս փաշան կըշարունակէ երկիրը
կառավարելու անանկ կերպով մը որ բոլոր ժողո-
վուրդէն յարգ ու պատիւ կըստանայ : Սինչեւ աս
օրս ամենեւին Թեթեւ գանգատի մըն ալ արժանի ե-
ղած չէ . այլ հակառակը՝ ընդհանրապէս ամմնուն
սիրէ ինչ , արգարութեամբ վարելուն համար , ինչ-
պէս հետագայ զիպաւորէն ալ կիմացի :

Իրեք օր է որ քանի մը երիտասարդներ հրէայի
մը տուն ժողովուրդ էին ան իրիկունը զօսանքով ան-
ցնելու , ու հրէան ալ Կաղղիայի հպատակ էր :
Կաղղա պաշին ու Թիֆլիսի պաշին երաժիշտներուն
(չալլաճի) ձայնը լսելով ներս մտան , հին եղած
մարդիկներուն սկսան հվել պակաս զուրկել ու նաեւ
ծեծել , որ իրենց պաշտօնին չէր իյնէր , ու ամ-
մենն ալ բռնեցին բանտը տարին բռնութեամբ :
Սէջերէն մէկը աղատելով Կաղղիայի հիւպա-
տսին գնաց պատմեց եղած զիպաւոր . որ հետեւ
եալ օրը անձամբ երթալով Սաստ փաշային քովը
ազգու խօսքերով մը գանգատ ըրաւ :

Փաշան խմանալով բանը , թող տըւաւ խնայն ե-
րիտասարդները որ անիրաւութեամբ բանտը դր-
ւեր էին , ու կանչել տալով խափազ պաշին ու Թի-
ֆլիսի պաշին , անաչառութեամբ հետեւին խօսե-

խաւար : Վասն ու հոտոտելեաց զգայութենէն , քաղցր
բառն , բուր , հուր :

Շուր բառէն եղած պիտի ըլլայ , որ արեգակին լոյսը
կրակին նմանցնելով՝ արև այսինքն հուր և ըսեալ է
(հայու լեզուին մէջ ևր առաւելական մասնիկ է) . ալեւոր
(շատ ձերմակ մորօք) բարև այսինքն շատ բարի , բարի և-
և քան զե , առաւել քան զառաւել : Շուր կըհետևի օր
բառը , կրակ ու կարմիր բառերն ալ : Շուր բառէն կըհետևի
ձիւն , ծով , ձուկ և այլն . համարեա Թէ մեր լեզուին ամմեն
բառերն ալ ստուգաբանութիւն ունին . կարծեմ Թէ պի-
տի ընդունին ասոնք :

Ամառն համառն :
Չմեռն ձիւններն :
Աշուն խաղաւն :
Գարուն գեղուն :

Մշուշտ առաջին անգամ զարհուրելի վիճ մը հանդի-
պելով , այս զարհուրական միջարկութիւնը ըսեալ է , վիճ .
ինչպէս մինչև հիմայ կանանց լեզուին մէջ կըլսենք : Մ-
ռաջին անգամ դրախտին մէջ տեսած հրեղէն պահապա-
նին , հուր շուտ տակ կամ հուր շուտ ալ ու ետքը հրեշտակ
ըսեալ ըլլալը հաւանական է :

ցաւ ու ետքը բանտը խրկեց , ուր տեղ դեռ կըկե-
նան :

Ս զիպաւոր զգացում մը տըվաւ քաղքին մէջ ,
բայց ամմեն մարդ ընդհանուր կառավարչին ընթաց-
քը կըհամարէ :

Ս . Տըվուազ Կամասկոսի գաղղիական նոր
հիւպատոսը , հասաւ իր տեղը :

Ս . Ն . Կիզ ալ նոյնպէս Պէրուծ հասաւ ,
ուսկէց Հալէպ պիտի երթայ չորս տարի ևս վարե-
լու Կաղղիայի հիւպատոսութեան պաշտօնը : Ս
գործակալը որ շատ պատուի զործքեր ըրած էր
հոս , ետ դառնալուն մեծ պատուով ընդունեցին զին-
քը . երկրին բոլոր երևելի մարդիկը շուտ մը այցե-
լութիւն եկան իրեն , իրենց սրտին ուրախութիւնը
յայտնելու :

ԱՐՏԱՔԻՆ ԵՌԻՐԵՐ

ԱՆԳՂԻՆ

Այն օրագրութիւնը կրտէ Թէ անդրկայաց ազգայ-
ին պարտքը 800,000,000 լուէ սթէլլինի կըհասնի :

Ս . Կուգ որ արդէն արտօնութիւն առած է
Ուէգուրն վարպետին հետ , Վոլոյայի ան հեռազը-
լութիւն (Թէլէկրաֆ) մը շինելու , կըսուի Թէ ըս-
կըսաւ մէկ գլծ մը հաստատուել փոփոխութենէն ինչ-
ւան Վինտօր , ու անկէց Պուքէնկամի պալատը ու
Բաւլամէնդին խորհրդարանը : Երբ որ Ս . Վ հափառութիւնը
Վինտօր գտնուի , կարող ըլլան մէկ լոպէէն աւե-
լի քիչ ատենի մէջ լուր տալու անոր :

ԳՆՂԻՆ

Փարիզ , 24 փետրվար :

Օսմանեան տէրութեան զեսպանը , Կաֆի Էֆէն-
տին երկէ իրիկուն փարիզ հասաւ , ու մօտ օրերս
Ս . Վ հափառութիւն գաղղիացոց Թաղաւորին պի-
տի ներկայանայ :

Փալէ Ոսայեալ ըսեալ հոյակապ պալատը գի-

Մաջին մարդուն պզտիկ գերդաստանին պէտք եղած
և գործածած լեզուն , իր նշանակող բաներուն հետ ա-
նանկ բնաւոր կապ մը ունի , ու խօսած աստուածաբիւր
կանոնը անանկ բարեկարգեալ է որ՝ ինչպէս վերը ըսինք
մարդու կանոնին պէտք չունի :

Տակաւին շատ աւելի հաստատուն խօսքեր պիտի
գտնայինք հայոց լեզուի առաջնութեանը վերջոյ , եթէ
լեզուին հետ գրականութիւնը ի միասին եղած ըլլար ,
ու այն առաջին լեզուն անկորուստ ու անարատ մինչև
հիմայ մեզի բերելու աւանդապահ ըլլար : Բայց այն
նորածին ազգին բերանը , որ զանի պահել ոչ հոգն էր
և ոչ ալ հոգ ընելու պարտաւորութիւն ունէր , ոմն այս-
պէս և ոմն այնպէս արտաբերելով , դարեր անցնելէն
ետեւ , կամ անզգուշութենէ կամ կիմային օգոյն զանա-
զանութենէն , անշուշտ քիչ կամ շատ փոխելի շփոթե-
ր էր , երբ որ մեր երջանիկ հայրերը հասան առաջը առին ,
ուղեցին ազգին լեզուն գոնէ այն ժամանակին իր գտնը-
ւած տեղը կապել , ինչպէս որ կապեցին ալ : Բայց կըր-
նայ մարդ ըսել Թէ շատ ուշ՝ լեզուին կործանմանը վրայ
հիմն դրին . ինչպէս կըտեսնանք որ շատ կերպ կանոն-

տուժեանց դահլիճին քով սենեակները (տայրէն) քեղութեամբ կը դարձարեն, ուր պիտի գայ բանի մը օրէն, Վ. Կարապետի իշխան (Կիւսէ) Լուի Վերգոր Վրմուրի դքսուհիին եղբայրը, ու Վրէմիզին իշխանուհիին նշանաժող, որ Վ. Վ. Կ. Լուի Վերգորի գաղղիացոյ Թագաւորին աղջիկն է:

Փարիզու մէջ ծեր մարդ մը կայ Ս. Տիէքէրսոնիէն անունով, որ լըման հարիւր երսունը հինգ տարու է: Եւ երկայնակեաց մարդը բնիկ Վրդուացի է, ու շատոնցվընէ փարիզ կը բնակի, ամենեւին տկարութիւն մը չունի ու իր իմացական կարողութիւնն ալ տեղն է:

Քաւէն քաղքէն կը գրեն:

Մատամ... որ սուրբ Տօհաննէսի Թաղը կը բնակի, երկար հիւանդութիւն է մը ետքը իրեքշաբթի իրիկուն կարծեցին որ մեռաւ: Ուստի նոյն զի շերտ սովորական կեդրով զարդարեցին անոր մարմինը, ու երեսն ալ կտաւ ու մը ծածկեցին: Ընդշաբթի առտու երբ որ զագաղղ բերելով երկու հոգի վերցուցին զանի որ միջը դնեն, մեռելը բսկը սաւ շորով, ու արթնցաւ իր խորունկ քնափութիւնէն: Մատամ... հիմայ շատ առողջ վիճակի մէջ է: Մարդ կըստկայ երբ որ կըմտածէ թէ ինչ զարհուրելի վախճան պիտի ունենար այս կինը, թէ որ մէկ երկու ժամ աւելի քշեր իր քնափութիւնը:

ԻԴԱՆԻՆ

Տերութիւն Հռոմայու:

Հռոմայէն կը գրեն թէ Չինաստանի լուրերը՝ քրիստոնէական հաւատոյ համար, շատ հաճելի են: Ենթադրեալ յաջորդութիւններէն ետքը, ընդարձակ ասպարէզ մը բացեցաւ կրտսն, առաքելական քորով շնորհուն, որոնցմէ արդէն բազմաթիւ անձինք Մաքսուէն ելին են Վրանդոն երթալով, որպէս զի Չինաստան մտնան: Կրթամուսններն նաեւ, որ մէկ նամակ մը գրեալ է այն կողմերու առաքելական փոխանորդէն, թէ փրկչի պատկերին սքանչելի երևումէն ետքը՝ օգոյն մէջ, չինացոյ կայսրն ալ փա-

կայ մեր լեզուի քերականութեանը մէջ, պատճառը լեզուին հնութիւնը ու քերականութեան նորութիւնն է: Վասն զի լեզուի սկզբնաւորութենէն գրեթէ 4400 տարի ետքը սկսեց գրականութիւնը. թէպէտեւ անկէջ առաջ կար, բայց շատ անկատար կերպով:

Հին փամանակի իմաստունները հարկաւորութենէն ստիպելով՝ նախ նշանագիր ու ետքը գիր տառից հնարեցին, բայց ինչպէս հին սովորութիւնն է, կետագրութեամբ, մինակ քանի մը բաղաձայն, անոնք ալ կերպ կերպ դարձնելով (նախաստիճիւն հայաստանի 3 հատոր, երես 75) ուրիշ ձայն հանել. բառերուն մէջի ձայնաւորները բոլորովին կետով ըլլալուն շատ անգամ նոյն շարունակ կետերը գիծ մը ձեւացնելով այնպէս զընել վայելուչ տեսած են (գուցէ հին սովորութեամբ պատուել ուղղով մինչև հիմայ, Ստուած Յիսուս Քրիստոս անունները, նաեւ ոմանց պատուելի մարդիքներուն անվանները՝ Սրբաբան, Պատրիարք, Կաթողիկոս, նոյն գծով կը շինեն որ կըսուի պատիւ, որն որ ուրիշ ազգաց մէջ գրեթէ չի կայ): Չայնաւորով սկըսած բառերուն տեղը խել մըն ալ նշանագիր շինած էին, ինչէն հին

փառքըցուցեր է քրիստոսական հաւատքը ընդունելու, ու ասոր համար գրեր է Հռոմ որ քանի մը քարոզիչ խրկեն իրեն:

((Ստեղծ. թրիէսդիս:))

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մօսքա քաղաքը՝ Վրէմիզին կողմից ըսեալ լատին մէջ են Ուստիայի հպատակ բոլոր երկիրներուն Թագերը, Խաղանի Թագէն Բնական Բոլորնիայինը. հոն կը պահուին նաեւ Ուստիայի կայսերաց արքայական զաւագանները, տթուները, ու այն հանդերձները որ տարին անգամ մը կը հաղնէին, այսինքն կայսր սլաւաճած օրը: Ուստաց տէրութեան պատմութիւնը՝ կայսերական զրօշակներով կը տեսնուի հոն, ինչպէս և ընծաներովը՝ որ ատենօք այս հզօր տէրութեան կայսրերը ու իրենց յաջորդները, յաղթութեամբ ձեռք բերած են: Կան նաեւ մեծ ոսկի ամաններ որոնց մէջը աղ ու հաց կը դնէ Մօսքայի ժողովուրդը ու կը մատուցանէ կայսերաց երբ որ անոնք այցելութիւն կու գան:

Բեղրպուրկի կայսերական թանգարանը, խել մը մարգարիտներ ու ընտիր անդամանդներ ստացաւ մօտերս: Ետնց միջ հինգ հարիւր հատի չափ խոշոր մարգարիտներ կան, որոնց նմանը չի գտնուիր ուրիշ տեղ. ասոնց մէկն ալ շատ զարմանալի է իր մեծութեամբը ու անհամեմատ գեղեցկութեամբը, որ իր խեցիին (սէտէֆ) մէջ կը պահուի: Ենթամանդներն ալ թէ անտաշ (խամ) թէ բանաճ, ամեն ձեւ ու ամեն տեսակ, մարգարիտներէն վար չեն մը նար: Ետնք ամենը մէկէն ընծայ տըվաւ Մ. Կիլիկիոմ Լէօվիլյազիմ առուուրի ատենին խորհրդական ու առաջին աստիճանի վաճառականը: Եւ մարդուն բարի նախանձը վարձատրելու համար Վ. Վ. Կ. հափառութիւնը բարեհաճեցաւ Սուրբ Սիմեոն լավի երրորդ կարգէն ասպետ անանել զանի:

(օրագր. Տէպայի:)

ձեռագիրներու մէջ կը տեսնանք, որոնց մէկ քանին բարեյշատակ Միխիլար Լեբազօր քերականութեանը մէջ կայ, ախարհ արեւ երկինք երկիր ամենայն գուցէ այն հին նշանագիրներէն մնացած ըլլայ մեր գիրերուն կերպ կերպ կենդանեաց պատկերքով նկարելը, ինչպէս հին ձեռագիր մատեններուն մէջ շատ կը տեսնուին, որն որ օտար ազգերը տեսնալով նշանագիր (իւնոսկիֆ) կը կարծեն, ինչպէս լատին-Պաթիսթիւ Զուր Նիզիլիթը իրեն կարգի քարոզիչներէն առնելով Չինաստանի նկարագրութիւնը կը շինէ և անոր մէջ կը կարծէ թէ չինաստանցիք իրենց ալիքաբետքին երկու անուն կուտան Զօ-Սու և Լոթի, գուցէ այնպէս ըլլայ, բայց ես կը կարծեմ թէ հայոց փառագիր Լոթիները չինացոյ նշանագիրներուն նմանցունելով կը կարծէ թէ չինացոյն է:

(մնացորդը հետեւեալ թիւով:)

ՔԱՆԱՔԱՆ ԽԱՐԻԽ

Պիւստիա, 19 Մարտ:

Վատրիական Փրէկաթը Պէլլոնա կոչուած շաբաթ իրիկուն հասաւ. 1. Վսե. Պարոն Պանտիէրա երրորդ ծովապետը այս նաւը պիտի անցնի, ու Վէնէրէ Փրէկաթը քանի մը օրէն Վէնէտիկ պիտի երթայ:

— Կիրակի իրիկուն ժամ 3 ու կէսին երկրաշարժութեան ցնցում մը զգացինք:

— Ն. Վսե. հաճի Լ. յուսկ աղա Մանիսայու կառավարիչը անցած շաբթու Իզմիր եկաւ իր եղբայրը՝ Ն. Վսե. Կաթուպ փաշան զինաւորելու որ մօտ օրերս պիտի գայ Սելանիքէն:

— Մանիսայէն կը գրեն թէ ամուսն 10 ին գիշերը հրդեհ մը պատահելով հոն 3-4 տուն էրեցաւ:

Կոստանդնուպօլիս. 9 մարտ 1843:

Յարգի վերատեսուչ Ըրշաբուսոյ Ըրարատեան:

Լիփ աղէկ տարի է որ Կոստանդնուպօլսոյ նեղուցին վրայ (որ Թագեղ զեղաւաճառութիւն կընեն. և ձեռքէս եկածին չափ դործոյս մէջ զգուշութիւն բանեցնելով) իմ շրջակայնրուս մէջ եղածին չափ վարկում և աղէկ անուն մը վաստելած եմ: Եւս օրերս իմ համբաւոյս դպչելու մէկը ելած ըլլալով՝ ինծի ալ պարտք է որ ես զիս պաշտպանեմ. և այս բանիս համար ձեր անկեղծ անաւորութեանը կապաւինիմ, որ իմ անունս և համբաւս պաշտպանելու ձեր յարգի լրագիրը ինծի օգնութիւն ընելու շնորհ ընէք:

Լըբք ամիսի մը չափ կայ որ՝ դերձակ Պարոն Յ... ին տունէն խանութ մէկ ախէթա մը եկաւ, որ տասն և ութը ցորեն քաղաւանս և վեց ցորեն ասնթօնիս ըսված փոշին իրար խառնել և քանի մի թուղթի մէջ բաժնել ու տալ կապըսպրէր. և ստորագրութիւնն էր՝ Ճէննար: Վիտէի որ՝ այս գեղս առնելու հիւանդը երեք տարվան տըղայ մըն էր, որ սուր ըսված հիւանդութիւնն է մը բռնըված էր. և տղուն հօրմէն ալ իմացայ որ՝ դեղը քսան և չորս ժամու մէջ հատցնել պատուիրէր էր բժիշկը. ուստի թէ տղուն կեանքը և թէ բժիշկին համբաւը խնայելով ինծի պարտականութիւն սեպեցի՝ որ բաղմաւառ չափը պակսեցնեմ, և միայն հինգ ցորեն դնեմ:

Չեմ ըսեր որ՝ Տօքթօր Նէննարօին պատուիրած դեղը՝ ասանկ չափի դնելով ալ հիւանդին վրան աղէկ ներգործութիւն մը կընար ընել. և հիւանդին տէրերը պատմեցին թէ՝ այն գիշերը տղան սաստիկ փորու ցաւով տանջուլի է, և իրենք ալ այն դեղը տալէն ետ կենալը հարկաւոր սեպեցին: Լըբք քաղաքիս երեսնի բժիշկներէն մէկը հիւանդին տունը խորհուրդի կանչուլեցաւ. նէ՛ առաջուց եկող բժիշկին տըված ախէթան և իմ ըրած փոփոխութիւնս այն բժիշկին իմացուցի. սակայն հիւանդին տէրերը այս բաներուս մէկն ալ ինձմէ չի լըսելին կընամ ամեն կերպով հաւատարմացնել: Բայց եթէ եղածը անոնք մէկ ուրիշ ձամբով մը իմացած կըլայ, այս բանին ես բնաւ յանցանք չունիմ. և ասոր համար Տ. Նէննարօին չէր իննար որ ինձմէ վրէժ պահանջելու համար ետեւէս իննայ: Բայց ինքը հիմայ իմ խանութիս անունը կոտորել կաշխատի. այն չի նայիր որ՝ կարելի է թէ տղուն մինչև հիմայ ողջ մնալ իրեն պատուիրած դեղին չափը պակսեցնելովս ըլլայ:

Ուստի իմ անունս կոտորելու աշխատելուն տեղը՝ որ տասն և ութը տարի շարունակ իմ ջանքովս թէ՛ հասարակութեան մէջ և թէ քաղաքիս երեսնի բժիշկներուն առաջը բիշ մը յարգ ստացեր եմ, պէտք էր որ իմ զգուշութիւն և խոհեմութիւն բանեցնելուս փոխարէն զիս

յարգեր և իմ մարդութիւնս ճանչնար : Եւ յիշատի թէ որ ես Տ. Ղէննարօն մէկ փնաս մը հասցընել ուզէի նէ ախէթան ձեռքս էր, ո՞վ կրնար ձեռքէս բռնել որ չեթամ այն հիւանդին տունը եղածը պատմելով անունը ըստըկի մը ընեմ, և ասիկա ինծի շատ դիւրին էր . որովհետեւ նոր եկած բժիշկ մըն էր . և պէտք եղած . բաները գիտնալու փորձը մինչև այն ատենը չէր ցըցուցեր : Եւ յիշատի ասիկա ինծի շատ դիւրին էր . և Տ. Ղէննարօն հետ խօսելու համար փորձ բժիշկ մըն ալ գտնել որ աւնոր հասկըցընէր թէ՛ սուր հիւանդութիւն է բռնըված երեք տարւան տղու մը քսան և չորս ժամու մէջ տասն և ութը ցորեն քաղով, անո տալը՝ տղուն մեղցընելու չէ ալ նէ՛ հիւանդութիւնը ծանրացընելու բաւականէն է վել զօրութիւն ունի : Եւ ասոնց մէկն ալ չըրի . և ընելուս ալ չեմ զղջար՝ ուրախ եմ : Բայց թէ որ այն ատենը իմ խոհանութիւնս ինծի չի թողուց որ այս բաներս հրատարակեմ, Տ. Ղէննարօն ինծի դէմ բռնած ճամբան զիս կը պարտաւորէ որ հիմայ ամէն բան երևան հանեմ : Եւս գործոյս մէջ ես խղճմանքաւոր և փափուկ սիրտ ունող մարդու մը վայլած ճամբան բռնեցի . և Տ. Ղէննարօն կը հրաւիրեմ որ այսքան ատենէ ՚ի վեր խանութս բանեցընելով՝ վրաս աղտ բերելու մէկ բան մը ըրած ունիմ նէ թող երևան հանէ . նայինք այն ալ իմ ըսածիս պէս կրնայ մի ըսել :

Տ. Ղէննարօն իմ անունս ավելիու համար ձեռքէն եկած թշնամութիւնը ետ չի ձգեր կոր . սակայն ըսածնեւրուն մէկն ալ հաստատելու փորձ մը և ապացոյց մը չունի ձեռքը : Բայց ես իրեն վրայ ասանկ մէկ բան մը գիտնալով՝ որ ըստուգած է, և անուանը և համբաւոյն և շահուն շատ մեծ փնաս կրնայ բերել, ես մինչև հիմայ բերանս գոցեմ եմ : Տ. Ղէննարօն ինծի համար ասանկ բան մը չի կրնար զուցեղ : Իրեն գրած ախէթան ձեռքէն է, որ չափը թուանշանով ալ գրած չէ՛, գրով գրված է, իմըս չէ՛ չի կրնար ըսել . ինքը ինծի դէմ խարդախութեամբ ծածուկ որոգայթներ կը լարէ . ես ամենեւին չի վախնալով՝ գործը ինչպէս որ է նէ երևան կը հանեմ : Երգարութիւնը, ճշմարտութիւնը և խոհանութիւնը որ կողմը գտնելով՝ արուեստին տեղեակ եղող մարդիկը և հասարակութիւնը դիւրաւ կը հասկընան :

Որք բանիս այս ալ ըսեմ որ թէ որ Տ. Ղէննարօն ինծի թշնամութիւն ընելէն ետ չի կենայ նէ՛ ինծի ալ հարկ կը լըլայ պէտք եղած տեղը բողբոջ և արգարութիւն իրաւունք պահանջել, որ ինձմէ չեն զանար :

Հարգութեան ձերում

խոնարհ ծառայ
Նիքօլայի Աբեբի :

Մանիթէօն օրագրութիւնը Կաղղիոս մտած ապրանքներուն ցուցակը՝ 1843, 1842, ու 1841 տարիներուն յունվարի մէջ, բաղդատելով մը կը հրատարակէ : Եւ ետքի թուականիս մէջ վաճառքներէն առնըլած տուրքերը՝ 7 միլիոն 198,956 ֆունտի հասեր են . հետեւեալ տարին նոյն ամիսը՝ 9 միլիոն 155,496 ֆունտի . 1843 ին՝ 10 միլիոն 711,608 ֆ :

(Օրագր . Տէպայի) :

Բէզդպուրէն կը գրեն 23 յունվար :

Եւ ձմեռ յոյսերնիս բոլորովին կտրեցինք ցուրտ տեսնելու . վասն զի ձմեռը մտանք ու ելլալիս մօտեցաւ առանց ցուրտ զգալու . քաղցր բարեխառնութիւնը ամենեւին չի զաղրէր . բայց սաստիկ անձրև կուգայ, մայրաքաղաքին փողոցներէն գրեթէ չանցնելի, ու ամեն տեղ գանգատ կը լըլայ երթեւեկութիւնը դժարաւ ըլլալուն համար : Օգին շարու-

նակ խոնաւութիւնը տարաւորիսիկ հիւանդութիւններ պատճառեց այս տեղի բնակիչներուն մէջ : Ըսքօրփիդ ըսեալ հիւանդութիւնն ալ խիստ շատ կայ :

Եւստիճանք բարեխառնութեան Օփուռնիոյ, դիտեալ ՚ի միջօրէի և եղեալ ըստ բաժանման Ոսմուրի :

	Ստուերի :	Հարեու :
Ուրբաթ	12 Մարտ + 9½	աստիճան 00 աս .
Դարբաթ	13 " + 10½	" 00 "
Կիրակի	14 " + 12	" 19½ "
Կրկուշաբաթի	15 " + 12½	" 00 "
Կրեքշաբաթի	16 " + 8½	" 00 "
Չորեքշաբաթի	17 " + 8½	" 14½ "
Հինգշաբաթի	18 " + 8½	" 00 "

ԱՌԵՒՏՔԱՅԱՆ ԽՈՒՐԵՔ

ԱՆԳՂԻՆ

Ի լիւրբուր , 19 փետրվար :

Բամպակ : Եւս ապրանքը թէպէտ կը ծախելի, բայց գինները շատ ցած են . այս եօթնեակիս մէջ ամեն տեսակ բամպակներուն ծախսը 16 690 պալեա է և Կիւսիակ Կահանգներէն եկած բամպակներուն գումարը՝ այս շաբթըւան մէջ, միայն 6890 պալեա է : Եւս ամեն բոլոր տեսակ բամպակներուն ծախսը հասաւ 144,200 պալեա . ասկէ կիւսիակի որ անցած ամսու մէջ կուգէր ու հիմայ չուգէր : Եւս անցած ապրանքները լաւ չեն . միայն շատ բամպակ կըստաւոր որ ճամբայ ելած են Սիւսիակ Կահանգներէն . անոնք գալուն պէս հիմակու գիններով առնող շատ կը գտնուի, որովհետեւ անոնք նոր հոնձին բամպակներն են և տեսակներն լաւ են :

ԳԼԳՂԻՆ

Մարտիկա , 27 փետրվար :

Բամպակ : Եւս թուր թուէ, ու քիչ ատենի մէջ բարի փափօթութիւն մը ընդունելու յոյս չի կայ, ուրովհետեւ ամեն կողմի լուրերը անյոյժող են այս ապրանքին համար, մանաւանդ Կղմիրու ապրանքները, որոնք թէպէտ և կը ծախւին բայց շատ ցած գիններով : Սպաւաւի շատ պատուական ապրանքը այս շաբաթ 14 պալեա միայն ծախւի է 70 ֆրանք 50 քիլօկրամը հարկերին 4 վար իջեցնելով ու երկար պայմանաժամով (վատէ) : Բրքարդաճի և Կասապայի բամպակներէն ծախւի են 55 և 60 ֆրանք ըստ տեսակին, վերոյիշեալ գաշններով : Սիւսիակ Կահանգներու բամպակները սկսեալ 50 ֆրանքէն մինչ 70 ֆրանք ըստ տեսակին, 1200 պալեա ծախւի է այս տաւը օրւան մէջ : Կղմիրուսի բամպակներէն ծախս չեն նշանակեր :

Չէթ : Թուր է և գինները մի և նոյն են 111 ֆրանքէն 115 ֆրանք էթթօթթիթան (75 օխան) :

Սուսամ : Չուգէր . վերջի գինը 47 ֆրանք է 100 քիլօկրամը :

Կասապայի մորթ : Բիւլ կուգի . առաջին տեսակը 8 ½ ֆրանք քիլօկրամը (320 տիրհէմը) . երկրորդ տեսակը 5 ½ . երրորդ տեսակը 3 ½ :

Եւս թուր : Եւս զղմիրու առաջին տեսակը 2 ½ ֆրանք . կէս քիլօկրամը . երկրորդ տեսակը 2 ֆրանք :

Կիւսիակ : Եւս զղմիրու առաջին տեսակը 2 ½ ֆրանք . կէս քիլօկրամը . երկրորդ տեսակը 2 ֆրանք : Եւս զղմիրու առաջին տեսակը 2 ½ ֆրանք . կէս քիլօկրամը . երկրորդ տեսակը 2 ֆրանք :

ԱՆՍՏՐԻՆ

Թիւրք , 3 Մարտ :

Բամպակ : Չուգէր . առ հասարակ ամեն տեսակ բամպակներուն օրէ օր գինները իջնալու վրայ են . մաքօն (որ Կղմիրուսի բամպակն է) իջաւ 36 ֆրանքին . Կղմիրու պատուական սօսուճան 22 ֆրանքին, և այս գիններով շատ ծախող կայ առնող զտնուիր :

Ղէհրի : Չուգէր . իրաւ գինները իջաւ, բայց ծախս ալ չեղաւ աս օրերս :

Սուսամ : Կրեւմները շատ գէշ է, բնաւ առնող չի գտնուիր, և գինները իջնալու վրայ են . հասարակօրէն ամեն տեսակ ապրանքները անշարժութեան մէջ են, միայն փախմուտը և տորոնը (սլոյն) միշտ կուգին, առաւելապէս առաջինը որուն գինը օրէ օր բարձրնալու վրայ է և շատ ապրանք ալ կայ քաղաքիս մէջ :

ՏԱՆԿԱՍՏԱՆ

Օփուռնիա , 19 Մարտ :

Բաղաքիս գործառնութիւնները միշտ մի և նոյն թուրութեան վիճակի մէջ են, ու խիստ քիչ վաճառմունքներ եղան աս շաբաթ :

Բամպակ : Եւս շարժութեան մէջ է, ու Կղմիրուսի անյոյժող լուրերուն պատճառաւ ծախս առնող խիստ իջկայ . աս օրւան գինները 175 զուռու չէն 205, ըստ տեսակին :

Ղէհրի : Թուր է . գինները անունով միայն է, 16 և 21, ըստ տեսակին :

Միզրամմ : Եւս անյոյժող լուրերով կը գտնուի :

Չէթ և սուսամ : Չուգէր . առաջինը 195 և 204 . երկրորդը 38 :

Կֆիօն : Կաղղիական շոգեհաւը յոյժող լուր մը չի բերելով աս ապրանքին վրայով կրկին գինը իջան . այս շաբաթ 20 սէփէթ աֆիօն ծախւի 74 զուռու չէ քիչ . կը լըլենք թէ Օլանայի չինտու բնակութեան տեղւոյս փոխանորդը 100 սէփէթ, առեր է 76 զուռու չէ մինչև 78 զուռու չէ քիչ . ասոր վրայ ապրանք ունեցողները 80 զուռու կուգին :

Եւս ժամա լտեցինք որ երեկ 82 զուռու ծախւի է . ու հիմայ ապրանք ունեցողները 85 զուռու չէ գին . կերեւայ թէ Կղմիրուսի եկած լուրերը այս ապրանքին համար յաջող են : Հիմակուհիմայ քաղաքիս մէջ 200 սէփէթ աֆիօն մնաց :

Փալամուտ : Միշտ կուգի ու թանկ գիններով կը ծախւի, և շատ քիչ ապրանք կայ ծախու :

Եւ ՏԳՐԱՐԱՆԻ ՍՏԵՓԵՆԵՆՈՍԻ ՊԼՊՈՆԵՆ